ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Սահակյան Վերա[1]

1894-1918 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՍԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Բանալի բառեր՝ *Թեշքիլաթ-ը մախսուսա, Հատուկ կազմակերպություն, Մատենադարան, վավերագիր, ձեռագիր, Տիրայր վարդապետ։*

Մաշտոցյան Մատենադարանում կոտորածների և Մեծ Եղեռնի վերաբերյալ վավերագրեր են պահվում կաթողիկոսական դիվանի 236-րդ թղթապանակում, Կաթողիկոսական դիվանի պարսկերեն, արաբերեն, թուրքերեն վավերագրերի 3-րդ թղթապանակում, Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցիների հոգաբարձության[2], Մկրտիչ Ա Վանեցի կաթողիկոսի (1893-1907 թթ.)[3], Տիրայր վարդապետի[4], Նորայր Բյուզանդացու[5], Ա. Ալպոյաճյանի[6] և այլ անձանց արխիվներում[7]։

[1] Մաշտոցյան Մատենադարանի Արաբատառ ձեռագրերի նկարագրման և գիտական թարգմանության բաժնի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ, էլ. փոստ՝ v.sahakyan@matenadaran.am

[2] ՄՄ, Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցիների հոգաբարձության արխիվ, թղթպ. 233։

[3] ՄՄ, Խրիմյան կթղ. արխիվ, թղթպ. 101։

[4] ՄՄ, Տիրայր վրդ. արխիվ, թղթպ. 124, 125, 126։

[5] ՄՄ, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթպ. 235։

[6] ՄՄ, Ա. Ալպոյաճեանի արխ., թղթպ. 85 ա։

Իր կարևորությամբ, բազմաբովանդակ, պատմական և բանասիրական թեմաների ընդգրկմամբ առանձնանում է հատկապես Ա. Ալբոյաջյանի արխիվը, որի մեջ տեղ են գտել «Հայոց բնաջնջումը»[8], «1914-ի Խոյի անցքերը»[9], «Թուրք վայրագությունները Կեսարիո մեջ»[10], «Եղեռնը և Թոմարզան»[11], «Մեծ ոճիրների ցանկ»[12], բռնգաղթի ենթարկված ականատեսների զեկուցագրեր ու հուշեր, հայ աքսորականների մահվան զոտիների վերաբերյալ գրառումներ և այլն։

Վավերագրերի կառուցվածքն ու բովանդակությունը տարբեր է։ Դրանցում տեղեկություններ կան բնակչության սոցիալական վիճակի, կրած զրկանքների, ցեղասպանական քաղաքականության և դրանցում քրդական հրոսակների մասնակցության, բռնությունների հետևանքով փախուստի դիմած բնակչության մասին և այլն։

Այս սկզբանղբյուրների ուսումնասիրությունը կարևորում ենք, քանի որ դրանք լուսաբանում են Օսմանյան կայսրության վերջին շրջանի պատմության մի շարք հարցեր, փոխանցում ժողովրդագրական, սոցիալական վիճակի, քրիստոնյա հպատակների նկատմամբ ցեղասպանական քաղաքականության վերաբերյալ տեղեկություններ ու մանրամասնություններ։

Սույն հոդվածի շրջանակներում, առանձնացնելով մի քանի վավերագիր, փորձել ենք վերլուծել Օսմանյան Թուրքիայում իրականացված կոտորածների մեթոդը, կազմակերպման ձևերը,

---

[7] Մեզ հանդիպած այլ օրինակներ տե՛ս տե՛ս ՄՄ ֆրանսիական հյուպատոսի արխիվ, թղթպ. 257, ՄՄ, Տիրայր վրդ., թղթ133, վավ. 76. ՄՄ, Գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտի արխիվ, թղթպ. 262, վավ. 9 (միկրոժապավեն)։

[8] ՄՄ, Ա. Ալպոյաճեանի արխիվ., թղթպ. 85ա, վավ. 2/3 [19:]

[9] Նույն տեղում, վավ. 2/3 [14:]

[10] Նույն տեղում, 3/6[36]:

[11] Նույն տեղում, 3/6[69:]

[12] Նույն տեղում, 5/11[86,] 5/11[87], 5/11[88] :

տարված նախապատրաստական աշխատանքները, պետության մասնակցությունն ու միջամտությունը: Դրանք համեմատել ենք Իթթիհադականների կողմից ստեղծված *թեշքիլաթ-ը մախսուսա*[13] *կազմակերպության* կողմից իրականացված գործողությունների հետ, և եզրակացրել, որ լայն առումով, բոլորն էլ փոխկապակցված

[13] تشكلت مخ سوسه -Teşkilat-ı Mahsusa, Teşkilat-ı mahuse, անգլ. Spetial Organization. հայերենում տառադարձվել է *Թեշքիլաթ-ը մահսուսէ, Թեշքիլաթ-ը մահսուսա*, արևմտահայերենում՝ *Թէշքիլաթի մահսուսէ, Թէշքիլաթ-ը մահսուսէ* ձևերով, հայերեն թարգմանվում է Հատուկ կազմակերպություն ձևով: Հայ ցեղասպանագիտական գրականության մեջ հանդիպում ենք Թեշքիլաթ-ը մախսուսա, Մասնավոր կազմակերպություն, Մասնահատուկ կազմակերպություն տարբերակներով: Ըստ որոշ տեղեկությունների ստեղծման որոշումը ընդունվել է Միություն և Առաջադիմություն կուսակցության Կենտրոնական կոմիտեում: Պաշտոնապես ենթարկվել է Ռազմական նախարարությանը: Քաղաքացիական բնակչության դեմղղված ործողություններն իրականացրել է Կենտրոնական կոմիտեի հրահանգներով: Թեշքիլաթ-ը մախսուսան ունեցել է չորս ստորաբաժանում՝ Ռումելիի ստորաբաժանում, որը գլխավորում էր Արիֆ բեյը, Կովկասյան՝ ղեկավար մայոր Ռիզա բեյ, Աֆրիկյան՝ ղեկավար Հյուսեին Թոսուն և Ալի Բաշհամրա, եւ չորրոդ՝ Արևելյան Նահանգների ստորաբաժանում, կենտրոնը Էրզրում, պատասխանատու՝ Բեհաեդդին Շաքիր *բեյ* (ավելի մանրամասն տե՛ս Авакян А., Геноцид 1915 г: Механизмы принятия и исполнения решений/ НАН РА, Музей Геноцида армян / [Отв. ред. Г. Р. Симонян]., Երևան 2013): Կազմակերպվելիք գործողությունների հրամանները տրվում էին Ներքին Գործոց և Ռազմական նախարարի և հատուկ կազմակերպության պատասխանատուի կողմից. (տե՛ս Vahakn N. Dadrian, The coalescence of the roles of party and state in the enactment of the Armenian Genocide Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ժե, Պէյրութ, 1995, էջ 49-55): Կազմակերպության գործունեությունը վավերացվել է 1914-ի օգոստոսի 3-ի գիշերը.(Raymond Kévorkian, Thr Arrmenian Genocide, A Complete History, Published in 2011 by I.B.Tauris & Co Ltd, New York, Pdf, էջ 180) 1914-ի օգոստոսի 3-ից մինչև 1918-ի հոկտեմբերի 8-ը գործել է *թեշքիլաթ-ը մախսուսա և ումուր-ը շարքիյե դաիրեսի* անունների ներքո: Լուծարվելու պատճառը Թալեաթի կառավարության դադարեցումն էր: Սակայն, *թեշքիլաթի* մեջ ընդգրկված անդամները հետագայում շարունակել են գործունեություն իրականացնել քեմալական Թուրքիայում այլ կազմակերպությունների կազմում:

են եղել՝ որպես ցեղասպանական քաղաքականության և Մեծ Եղեռնի իրականացման նպատակ:

Կայսրության վերջին շրջանում կազմավորված և Հայոց ցեղասպանության մեջ իր մեծ դերակատարությունն ունեցած *Թեշքիլաթ-ը մախսուսայի*[14] գործելաոճի մեթոդներն ու նախօրինակները տեսանելի են 1890-ական թվականներից սկսած, տարբեր զինված ջոկատների իրականացրած գործողությունների մեջ: Ընդհանրությունները ակնառու են հատկապես Համիդիե[15]

---

[14] *Թեշքիլաթ-ը մախսուսայի* առաջին ուսումնասիրողն է եղել Ֆիլիպ Հենրի Ստոդդարդը: Նա ԱՄՆ Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի տեղեկատվության և հետազոտության բյուրոյի վերլուծաբան էր, ԱՄՆ 1947-ին հիմնադրված Կենտրոնական հետախուզական վարչության հետախույզ: Ստոդդարդը 1955-ից սկսում է ուսումնասիրել թուրք-արաբական հարաբերությունները, որպես գիտահետազոտական աշխատանք: Իսկ 1963-ին պաշտպանում է իր ավարտաճառը՝ "*The Ottoman government and the arabs, 1911 to 1918: A Preliminary Study of the Teskilet-i Mahsusa*", Ann Arbor, Micigan, 1963", վերնագրով: Ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրը *Թեշքիլաթ-ը մախսուսայի* անդամ Քուշչուբաշը Էշրեֆի հուշերն են: Այս ուսումնասիրության մեջ հայոց ցեղասպանության վերաբերյալ որևէ անդրադարձ չկա: Թեմայի հայ առաջին ուսումնասիրողներից է Գրիգոր վրդ. Կերկերյանը, տե՛ս Գ.Վ.Կ., Յուսաբեր, բացառիկ թիւ նուիրուած ապրիլեան եղեռնի յիսնամեակին, 1915-1965, «Յուսաբեր», Գահիրէ, 1965, էջ 5-35: Գրիկերի մեկ այլ արժեքավոր աշխատանք անտիպ է և գտնվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության արխիվում: Մյուս կարևոր և արժեքավորուսումնասիրություններից են՝ Vahakn Dadrian, "*The Role of the Special Organization in the Armenian Genocide during the First World War," in Minorities in Wartime,* P. Panayi (éd.): Oxford, 1993. Raymond Kévorkian, Thr Arrmenian Genocide, A Complete History, Published in 2011 by I.B.Tauris & Co Ltd, New York, տե՛ս նաև Ahmet Tetik, *Teşkilat-ı Mahsusa (Umur-ı Şarkiyye Dairesi) Tarihi*, İşbankası Y., 2014. [14] Авакян А. Геноцид 1915 г: Механизмы принятия и исполнения решений/ НАН РА, Музей Геноцида армян / [Отв. ред. Г. Р. Симонян]., Երևան 2013, Orhan Koloğlu, Curmalcilikten Teşkilat-ı Mahsusa'ya Kırmızı Kedi Y. 2012 , Atilla Çeliktepe, Teşkilat-ı Mahsusa'nın siyasi Misyonu, 2002 և այլն:

[15] Կազմվել են 1890-ական թվականներին Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ: Տե՛ս Osman Nuri, *Abdul Hamid Sani ve devri Saltanatı,* İstanbul, 1327, էջ 858-859: Արթուր Պէյլերեան, *Համիտիէ զօրախումբերու կազմակերպութեան ծագումը (1890-1894),* Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պէյրութ, 1994թ., էջ 81-96): Տե՛ս նաև Лазарев Я. Д., Причини бедствия армян в Турции и ответственность за разарение Сасуна, Тифлис 1895.

զորաջոկատների հետ, ինչպես ստեղծման մանրամասնությունների[16], այնպես էլ գործողությունների ձևաչափերի առումներով:

Թեշքիլաթականների կողմից իրականցվում էր քարոզչություն, որը նոր երևույթ չէր: Այս կապակցությամբ մեջբերենք վավերագրերից մեկում մեզ հանդիպած հետևյալ օրինակը, որը վկայում է, թե կառավարությունը 1895-96 թթ. անխնա կոտորելով իր հպատակ հայությանը, այլևս սկսել էր փորձեր անել վերջին մի հարվածը տալու և դրա համար սկսել էր աշխատանքներ տանել ռուս և պարսիկ պետությունների մեջ եղած հայերին կասկածելի դարձնելու ուղղությամբ: Ռուս կառավարությունն էլ իր հերթին սխալ ու եսամոլ կեցվածք էր որդեգրել Օսմանայն հայության նկատմամբ [17]:

Քարոզչություն իրականացնող միևնույն մոտիվացիան տեսնում ենք նաև թեշքիլաթականների պարագայում, որը տարվում էր տարբեր սոցիալական շերտերի ու դասակարգերի միջոցով, այդ թվում՝ զինվորական ու քաղաքական գործիչներ, հոգևորականություն, հյուպատոսական նստավայրերի ներկայացուցիչներ, հասարակ քաղաքացիներ և այլն: Հյուպատոսների մակարդակով խոռվությունների հրահրումը, ըստ նախատեսվածի պետք է սկսվեր Կ. Պոլսից և ապա ալիք-ալիք տարածվեր դեպի ներքին գավառներ[18]: Այս գործի մեջ առաջին

[16] Ըստ վկայությունների՝ Համիդիե ջոկատների մեջ ևս բազմաթիվ էին բռնադատված հանցագործները, որոնք հատուկ այդ նպատակի համար ազատ էին արձակվել բանտերից: Տ՛ես Положение армян в Турции до вмешательства держав в 1895г., М. 1896., էջ 165, հղումը՝ Տիգրան Խաչատրյան, ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի (Երևան, 14 դեկտեմբեր, 2012թ.) նյութերի ժողովածու, պրակ II, Երևան, 2014, էջ 369-372:

[17] ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթպ. 151, վավ. 22:

[18] Նույն տեղում:

ակտիվ ներգրավողներից էր Թիֆլիսի օսմանյան հյուպատոսությունը[19]:

Հայերին որպես դավաճան, որպես ներքին թշնամի որակելու համար մանրամասն կազմվել էին ծրագրեր: Ըստ նման ծրագրերից մեկի պետք է բախումներ հրահրվեին տաղավար տոներին, երբ հավաքված էր լինում մեծաթիվ բնակչություն: Անձնական վիրավորանքները պետք է թեժ վիճաբանությունների առիթ ստեղծելու սադրանք պարունակեին, որն էլ աստիճանաբար տարածվելով վերածվելու էր մեծամաշտաբ ընդհարման: Արդյունքում, հրոսակախմբերը՝ զինված հատուկ գնդերը, գործի էին անցնում, ապա միջամտում էր կառավարությունը: Այս միջադեպերը որակվում էին որպես հայերի կողմից կազմակերպված «դավադրություններ» և դրանց բացահայտման ուղղությամբ տարված հետախուզության արդյունք: «Բացահայտված պատասխանատուները»՝ հայ երևելիները, խստագույնս պատժվում էին կառավարության կողմից, քանի որ դրանք որակվում էին որպես հայերի կազմակերպած հերթական հեղափոխություն: Սա էր կազմակերպիչների ծրագիրը. երկու կողմի մտքերը պղտորել ու իրար դեմ գրգռել, որպեսզի տոն օրերին սովորական եղած կինտոյական կռիվը ցեղային գույն ու երանգ ստանար ու սկսվեր թալանը [20]:

Ցավալի է, որ որոշ թերթեր ու պարբերականներ անդրադառնալով նման միջադեպերին լրագրողական անփութությամբ, առանց տեղեկությունների ճշգրտման, նմանօրինակ դեպքերը հաճախ հրատարակում էին «հեղափոխությունների» ու «ապստամբությունների» բացահայտման մասին, դասելով այն առօրեական լուրերի կարգին:

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում:

Քարոզչություն, սադրանքների լարում, հանկարծակի հարձակում, շուկաների և հայաբնակ թաղամասերի վրա հարձակում և հրդեհում, գործողությունները նույնականորեն տեսնում ենք 1894-96 թթ., Նախիջևանի՝ 1905-1906 թթ[21], Ադանայի 1909-ի, 1915-1916 թթ. Մեծ Եղեռնի ընթացքում:

Եւ՛ 1905-1906 թթ. և 1917-18 թթ. Նախիջևանի[22] և շրջակայքի կոտորածներից հետո անցկացված հարցազրույցներից պարզվում է, որ դրանք բոլորն էլ կազմակերպված են նույն ձևով, և, որ բոլորն էլ հատուկ ջոկատայինների կողմից տարված քարոզչության արդյունքն են: Հատկանշական և տեսանելի են գործելաոճի ամբողջական կրկնօրինակ ձևեր՝ նախապատրաստական աշխատանքներից սկսած մինչև ավարտը, ինչպիսիք են, կոտորածի հրահրում, սադրանքների լարում, թալանի կազմակերպում, դաժան սպանությունների գործադրում, երեխաների և իգական սեռի ներկայացուցիչների առևանգում[23], կրոնական քարոզչություն (*ջիհադ*)[24], հայրենազրկում[25],

[21] ՄՄ, Տիրայր Վրդ. արխիվ, թղթպ. 125, վավ. 173:

[22] ՄՄ, Տիրայր Վրդ. արխիվ, թղթպ. 126, վավ. 221, 230:

[23] «Հարգելի բարեկամ ցավակցութիւններուդ շնորհակալ եմ, բայց մարդակերպ գազանին վերջին հարուածը ամենանախկինները մոռնալ տուաւ: Սիրուն Կիլիկեան կատարելապէս աւերակ դարձաւ: Առած նամակներս աղետալի են: Կիլիկիոյ կարեւոր մարդոցմէ շատ քիչ ողջ մնացին: 25 լաւ ուսումնասիրեալներ իրենց ճամբուն դեպի Ատանայ, շէնքի մը մէջ այրուեցան, որոնց մէջ շատ մը բարեկամներ եւ մի քանի ազգականներ: Բուն իմ ընտանիքէն ու մօտ ազգականներէս դեռ լուր չունիմ: Կիլիկիոյ մէջ դեռ խաղաղութիւն չի հաստատուեցաւ: Դեռ երեք օր առաջ կոտորած, կրակ եւ սպանութիւններ կը տեսէր:Նամակ մը, որ Մերսինէ գրուած էր՝ կըսէր Ատանայի շուրջ բոլոր գիւղաքաղաքների այրերը սպանուեցան, կիներ եւ օրիորդներ թրքոց ձեռքն են»: Տե՛ս ՄՄ, Տիրայր վրդ. արխիվ, թղթպ. 125, վավ. 18:

[24]ՄՄ, Խրիմյան կթղ. արխիվ, թղթպ. 101, վավ. 172 (Հազարաւորներ զոհ գացին ուղղափառ հաւատոյն պատճառաւ...):

[25] Նույն տեղում, վավ. 177:

պետության միջամտության սցենարավորում և, որ ամենահետաքրքրականն է՝ դատավարությունների կազմակերպում, դոնբաց դատավարությունների անցկացում, որը որպես կանոն մեղավորությունը բարդում էր անհատների, ազգայնամոլների վրա, երբեմն որակում նաև որպես տեղային անկարգություններ։

Բաթումից գրված նամակներից մեկը ներկայացնում է Կրետեի պատերազմական դրությունը. «Յունական պատերազմի նշաններ կերևային. թիւրք կառավարութիւնը ինքզինքը մեծ վտանգի մէջ կըզգար և ահա ***ռամազան***ի[26] սուրբ օրերուն «մխիթարիչ» մօլլաներ եկան Կօվկաս, իսլամի պատվիրանները քարոզելու թուրք գաղթականութեանը։ Ատոնք պէտք եղածին պէս քարոզեցին և պատրաստեցին թիւրք ամբոխը»[27]։

Թիֆլիսից բացի, Բաթում, Սուխում, Սոչի և այլ քաղաքներ ևս քարոզչական կենտրոնների կարգին էին[28]։

Գաղտնի գործակալների խումբը համակարգում էր հատուկ ջոկատների աշխատանքը։ Հոգևորականներից մինչև հասարակ գաղթական նախապատրաստում էին ընդհարումների կարգը ապա՝ հետևում ընթացքին։ Երբ գործն արդեն ավարտված էր լինում սկսվում էր կառավարության սցենարավորված միջամտությունը։ Նախ նա հանդես էր գալիս պաշտոնական հայտարարությամբ, որում կոչ էր անում խաղաղվել ու վերադառնալ բնականոն աշխատանքի։

Իթթիհադականների կառավարման տարիներին թեշքիլաթ-ը մախսուսայի վայրագությունների մեջ ևս նույն սցենարավորումն է, թուրք բարձրաստիճան զինվորականների հրամանատարությամբ ու մասնակցությամբ։ Դրանց օրինակները տեսնում ենք 1916-ի

[26] Մահմեդականների 9-րդ ամսի անունը։
[27] ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթպ. 151, վավ. 22։
[28] Նույն տեղում։

Արծափի[29], Էրզրումի[30], Մուշի և շրջակայքի[31], Վանի ու Վասպուրականի[32], Կարինի և այլ շրջաններում տեղի ունեցած կոտորածների առնչությամբ:

Վավերագրերի մանրամասնությունները մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ 1915-1916 թթ. կազմակերպված Հայոց ցեղասպանությունը ներկայացվող պաշտոնական բռնագաղթի սահմաններից դուրս է, այն ունեցել է երկարատև կանխամտածված և համակարգված ընթացք, իրագործվել է մշակված հստակ ծրագրի հիման վրա[33], որի հիմքում ընկած էին որոշումը, ծրագիրն ու իրագործման նպատակը[34]:

Ստորև ներկայացնում ենք ՄՄ մեկ անտիպ վավերագիր, առանց կրճատումների և փոփոխության, ցեղասպանական քաղաքականության ամբողջ անփոփոխ ընթացքը ցույց տալու նպատակով:

Կիւմիւշխանէ[35]

---

[29] ՄՄ, Տիրայր վրդ. արխիվ, թղթպ. 126, վավ. 55:

[30] Նույն տեղում, վավ. 73:

[31] Նույն տեղում, վավ. 92, 146:

[32] Նույն տեղում, վավ. 176, 409. տես նաև Խրիմյան կթղ., թղթպ. 101, վավ. 14:

[33] Ցեղասպանության կազմակերպման ծրագրերի մասին տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության երկու ծրագիր, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 236-254:

[34] Դաղրեան Վահագն, Հայոց ցեղասպանութիւնը ազգային եւ միջազգային իրաւունքի երկակի հիմնախնդիր, Երեւան 2012, էջ 17-18:

[35] Գյումյուշխանե, Գիւմիւշխանե, Կիւմիւշխանէ, հին անվամբ Արգիրուպոլիս՝ արծաթի տուն: Գտնվում է Սև ծովի ավազանին պատկանող Խորշատ գետի հովտում, պատմական Պոնտոս և Խաղտիք երկրների տարածքում: Գյումուշխանեն 4 այլ գավառներով՝ Տրապիզոն, Սամսոն (Ջանիկ), Լազիուսն, 22 գավառակով և ևս 23 գյուղախմբով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին մտնում էր Տրապիզոնի նահանգի մեջ: Ընկած է Երզնկա քաղաքից հյուսիս-արևմուտք: Դարասկզբին ուներ 600 տուն, որից 200-ը հայ, 300-ը հույն և 100-ը

Կիւմիւշխանէ, 5 դեկտ. 1895

Մուշի և Վանի բնակիչներից տասնևմէկ հայեր, որոնք վերադառնում էին իրենց երկիրը Պայպուրտի[36] ճանապարհով, սեպտեմբերի 26-ին **Սիֆոնդէրէսի**[37] կոչուած տեղի վրայ, Գիւմիւշխանէից եօթը ժամ հեռու բռնուած են թուրք աւազակներից, որոնք սպանել են ութին, որոնց մէջ և մի քահանայ, և շատ սաստիկ վիաւորել են միւսներին։ Մի մանկամարդ կին, որ հետևում էր քարաւանին, ենթարկուել է վերջիններին չարչարանքին։ Աւարը, որ յարձակողները տարել են հասնում էր մինչև 1300 օսմ. ոսկու, որի մեծ մասը կտրուած փող էր։ Թէև ոստիկանութիւնը գնաց այդ գիւղը, բայց չարագործներից ոչ մին չի բռնուել։

թուրք։ (Էփրիկյան, Ա., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վնտ., 1903, էջ 505)։

[36] Բաբերդ, Բայբերդ, Պայպուրթ. հնում նշանավոր բերդաքաղաք էր Հայախաղտյաց անունով։ 20-րդ դարասկզբին գլխավոր քաղաք կամ ավան համանուն գավառակի մեջ։ Քաղաքի մեջտեղով հոսում է Ճորոխ գետը, որը բնակիչները գործածում էին նաև անտառից կտրված փայտերը Բաբերդ հասցնելու համար։ Գետային ճանապարհով քաղաքը կապված էր Բաթումի հետ (126 կմ)։ Իսկ ցամաքային ճանապարհով՝ Տրապիզոնի, Կարինի և Պարսկաստանի, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ։ ԺԲ դարի վերջին հիշատակվում է Աստվածատուր անունով Բաբերդի հայ տանուտերը, ով պատվիրել է Մշո Առաքելոց վանքի մեջ պահվող հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիրը։ Մեծ և ստվար «Տօնական» կամ «Մշո Ճառընտիր»-ն ունեցել է 660 թերթ, որոնցից յուրաքանչյուրը պատրաստվել է մեկ երինջի կամ արջառի կաշվից։ Ներկայումս պահպանվել է ձեռագրի 601 մագաղաթյա թերթ։ «Մշո ճառընտիրը» 1202 թվականին հափշտակվել է Բաբերդի այլազգի դատավորի կողմից, 2 տարի թաքցնելուց հետո, 1204 թվականին վաճառում է Մշո Առաքելոց վանքին՝ 4000 արծաթե դրամով, որը հավաքվել էր շրջակայքի բնակիչների և վանքի միաբանների միջոցներով։ Մինչև 1915-ը այն պահվել է Մուշում։ Ներկայումս ձեռագիրը գտնվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում, թիվ 7729 համարի ներքո։

[37] Գյումուշխանեի մոտակայքում գտնվող փայտե կամուրջ, որը 1919-ին քանդել են քեմալական հատուկ ջոկատայինները՝ խանգարելու համար անգլիական զորքի առաջխաղացումը։ http://erzurumluyum.net/

Այս առաջին դէպքը նախակարապետը եղաւ ուրիշ դժբախտութեանց, որք թափուեցին Կիւմիւշխանէի դժբախտ հայ բնակիչների վրայ։

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի Սուրբ Փրկիչ[38] վանքը ենթարկուեց մի յարձակման մոտակայ գիւղերի մահմետական բնակիչներից, որոնք սպաննեցին 23 տարեկան հովիւ Արշակ Շըտուքխանին, և քշեցին տարան վանքի հօտը, 370 ոչխար և այծ։ Կիւմիւշխանէի Հայոց եկեղեցական իշխանութիւնը ամեն միջոց գործ դրեց կառավարութեան մօտ, հէնց նոյն օրը՝ ոչխարները յետ դարձնել տալու համար, բայց այս միջոցները ոչ մի արդիւնք չունեցան։

Հենց այդ օրը կառավարութիւնը պաշտօնապէս հրամայել էր հայերին չբանալ իրանց խանութները՝ անախորժ արկածներից խորշելու համար։ Յաջորդ օրը, հինգշաբթի, հայերի խանութները և մագազաները[39] դեռևս գոցուած են մնում մինչև թուրքական ժամը 5-ին։ Երեկ կառավարութիւնը հասարակաց մունետիկի միջոցով յայտարարեց, որ կոտորածն անցել է, և հայերին հրաւիրեց իրենց գործերով զբաղուիլ։

Որովհետև առաջին յայտարարութիւնից սկսած հայ ժողովուրդը հնազանդուեց այս հրամանին, բայց հազիւ թէ մի կէս ժամ անցել էր խանութները բանալուց յետոյ, երբ յանկարծ շրջականների թուրք գիւղացիները՝ զինուած հրացաններով, ատրճանակներով, դանակներով ու կացիններով ընկնում են քաղաքի վրայ և միանալով թուրք բնակիչների հետ 2000 հոգուց

[38] Գյումյուշխանում եղել է մեկ եկեղեցի՝ Ս. Աստվածածին, կառուցող Հարություն աղա Իսրայելյան և մեկ ժամ դեպի հյուսիս հեռավորության վրա Սուրբ Փրկիչ կամ Ամենափրկիչ անունով մեկ վանք, որոնք ունեցել են հարուստ ձեռագրեր։

[39] Ֆրանսերեն՝ խանութ։

բաղկացած մի հրոսակախումբ են կազմում, որի մի մասը կողոպտում է շուկան, և միւս մասը հայկական թաղը։

Բոլոր ինչ որ պատկանում էր հայերին շուկայում՝ փող, հարստութիւն, ապրանք և այլն թալանուեցաւ յարձակուողներից, որոնք […] վառեցին վաճառականական գործերի թուղթերը և գրքերը։

Հայկական թաղում խառնակիչների պարագլուխները հրամայեցին չտպչել կանանց և երեխաներին։ Բայց առանց գթալու կոտորել բոլոր հայ արու բնակիչները 12 տարեկանից սկսած։

Այս հրամանի գործադրութեան ժամանակ հրոսակախումբը բռնում է տների մուտքը և ներս մտնելով ամենաանկարագրելի ոճիրներ և բարբարոսութիւններ է կատարում։

Մի նշանաւոր հայ՝ Իսրայէլեան պ. Նշան՝ Սանճաքի վարչական խորհրդի անդամ, որի ամենամեծ յանցանքը իր հարստութիւնն էր՝ [….] 7-800 հոգուց մի աւազակախումբ շրջապատել էր իւր բնակարանը, և ուզում էր ոչ միայն իւր հարստութիւնը այլև կեանքը։ Սկսում է իւրայինների հետ պաշտպանուել և յաջողում է երեք ժամ դիմադրութիւն ցոյց տալ։ Թուրքերը յուսահատուելով, տունը կրակի են տալիս քարիւղի միջոցով։ Տեսնելով տունը բոցերով շրջապատուած պ. Նշան Իսրայէլեանը դուրս է ընկնում և վազում է արդէն դէպի կառավարական պալատ, երբ մի հրացանի հարուած նրան ցած գլորեց։ Այս քաջարի մարդու դիմադրութիւնը հայկական թաղը շատ մեծ դժբախտութիւններից պաշտպանեց, որովհետև ամենքը նրանով զբաղուած ժամանակ չունեցաւ կատարելու այն բոլոր չարիքները, որոց նա կարող էր։

Հրդեհը աւերակ դարձրեց պ.Նշան Իսրայէլեանի տան հետ նաև երկու ուրիշ մերձակայ տները։ Մի ինչ որ Կարապախչեան Պօղոս 70 տարեկան և իւր որդին Մինաս 26 տարեկան կենդանի այրուեցին այս տների մէջ։

Բացի այդ մի այրի տիկին Թուրֆանտա Շիշէեան սպանուած է գնդակից, վիրաւորների թիւը հասնում է 17-ի, իսկ թալանուած տներին 68-ի։ Թրքական տասը ժամի մօտերը կառավարութիւնը փողի մի հնչիւնով յայտարարում է դադարիլ յարձակումը, և հայ ժողովուրդը առաջնորդուեցաւ խաների մէջ, ուր նա պահուեցաւ չորս օր, ամբողջ սնունդի համար ստանալով միայն հաց շատ չնչին չափով։

Հինգերորդ օրը կառավարութիւնը բանտարկեց 33 հայերի և հրամայեց միւսներին գնալ իրենց տները։ Այս 33 բանտարկուածներից մի մասը տասն օր յետոյ կախուեցաւ, միւս մասն էլ՝ քսան և հինգ օր աւելի ուշ։

Ներկայումս միայն մի հայ կայ բանտարկուած Օհաննէս Շահպասեան, որ անբաստանուած է Ահմէտ անուն թուրք գիւղացու կերակուրի մէջ թոյն խառնելու համար, ինչոր բացարձակապէս զրպարտութիւն է, որովհետև մի ոստիկան, որ կերել էր նոյն ամանից, որից և Ահմետը, չի զգացել ոչ մի թալկացում և կենդանի է։ Քաղաքային բժշկի վկայականը ի նպաստ բանտարկեալին է։ Բայց սա դեռևս շարունակում է հեծել նկուղներում։

Սուրբ Փրկիչ վանքը, որի հօտը տարել էին, յաջորդ օրերում ամբողջովին թալանուեցաւ։ Գալով եկեղեցուն նա ամբողջովին մերկացաւ իւր հարստութիւնից և իւր պարագաներից՝ միջին հաշուով 2500 օսմ. ոսկու արժէքով։

Կառավարութեան միջոցին թալանուած ապրանքները 10 000 օսմ.ոսկի արժէք ունէին։ Բայց եթէ նկատի ունենանք վաճառականական թղթերի և գրքերի ոչնչացումը[40] և այլն. կորուստը հասնում է 35 000 օսմ.լիրայից ավելի։

[40]Զեկուցագրում մանրամասնություններ չկան, թե ի՞նչ գրքերի մասին է խոսքը, սակայն հենվելով Դարանաղցու հաղորդած տեղեկություններին, հավանական

Կառավարութիւնը հազիւ թէ ետ էր դարձրել կողոպտուած իրերի և ապրանքների մի ամենաչնչին մասը։ Ամբողջ 200 օսմ. ոսկու արժէքով, որ ստիպեց հայերին խանութները բանալ և իրենց գործերը շարունակել, արդ. իր տրուած իրերը չէին բաւում նոյն իսկ վարձքի համար։ Հայերը շատ խնդրագրեր ներկայացրին՝ ցոյց տալով կարելի եղածները, բայց ոչ ոք մինչև այժմ բռնուած չէ։

Ներկայումս կառավարութիւնը հայերից պահանջում է երախտագիտական խնդրագրեր։ Ոչ մի այդ տեսակ խնդրագիր չէ դրուած մինչև այսօր, բայց այդ նկատմամբ եղած կառավարական ճնշումները օրէ օր աւելանում են։

Գալքէթ քաղաքում հայոց խանութները թալանուեցան։ Նիւթական կորուստը մօտաւոր հաշուով հասնում է 2000 օսմանեան ոսկու։

Ջէյրան գիւղաքաղաքում Ուլու-Ջէյրանում 30 հայերի տներ աւրուած են. Մորթել են Պետրոս և Ակոբ Խուպիկեանին։ Երկու ուրիշ հայեր կորսուած են։

Քալէ աւանում, Կիւմիւշխանէի մօտերքը սպանուած են Բլէրակ[41] գիւղացի երկու հայերը։ Զիխանայում (Տօրուի շրջան) սպանուած է նոյնպէս սվազցի մի հայ։

Աննկարագրելի մի թշուառութիւն իշխում է ամբողջ երկրի մէջ։

Թաղային քասիբ

Կիւմիւշխանէ, 5 դեկտեմբեր, 1895 թ. [42]։

կարելի է համարել, որ Գրիգոր Դարանաղցու հիշատակած Գյումուշխանայի վանքը նույն Ս. Փրկիչն է։ Ս. Աստվածածին եկեղեցում և Ս. Փրկիչ վանքում պահվում էին մեծ թվով ձեռագրեր, ուստի և երբեմն ուղղակի այն համարվել է Մատենադարան։ Կարծում ենք, որ խոսքը այս ձեռագրերի ոչնչացման մասին է։

[41] Բլերակ, Բլրակ, Բաբերդի հայաբնակ գյուղերից։ Դարասկզբին ունեցել է 65 տուն բնակիչ և մեկ եկեղեցի։

[42] ՄՄ, Տիրայր վրդ., թղթպ. 128, վավ. 42, Զեկուցագիր, 1895, 4 էջ, բնօրինակ։

Ամփոփելով հոդվածը նշենք, որ ըստ մեր ուսումնասիրած վավերագրերի, կոտորածներն իրագործվել են նույն ձևաչափով, որ դրանք ծրագրվել են պետության կողմից, որոնց իրագործման մեջ մեծ դեր են ունեցել հատուկ ծառայությունները, քարոզչության, հրահրման ու սադրանքների լարման գործառույթները: Գործողություններն իրականացնող բոլոր խմբերը փոխկապակցված են միմյանց հետ, և գործել են քրիստոնյա ժողովուրդներին ոչնչացնելու և թուրքական ազգային պետություն ստեղծելու համար: Եթե ցեղասպանական քաղաքականությունը իրագործվել է տարբեր՝ համիդիե, քրդական այլ ջոկատների կողմից, ապա Մեծ Եղեռնը իրականացվել է պետության, բանակի, 1914-ին պաշտոնապես վավերացում ստացած *թեշքիլաթ-ը մահսուսա* ցեղասպանական գնդերի կողմից: Ցեղասպանությունը պետական ծրագիր է, որի իրագործման մեջ մեծ դեր է ունեցել պաշտոնապես, պետության կողմից վավերացում ստացած կազմակերպություն՝ *թեշքիլաթ-ը մահսուսա*:

COMPARATIVE ANALYSIS OF THE 1894-1918 MASACARES AND THE ACTIVITIES OF TESHQILATE MAHSUSA (BASED ON THE DOCUMENTS OF MATENADARAN)

(Summary)

Sahakyan Vera

In Matenadaran after Mesrop Mashtots, except precious manuscripts in Armenian and other languages, there is a huge number of documents that include significant historical information and details. This article reflects some of the documents that are related to the masacres committed in different residneces of the Ottoman Empire from

1894 to 1918. Based on the analysis of the procedure of the masacres and the participation of the special military fractions in the masacres, we conclude that, in general, they were related to the military fractions of the special organization named "Teshqilat-i Mahsusa". The report concerning the Masacres of the Gyumshukhane included in the article is published for the first time.

Сравнение погромов 1894-1918 гг. с действиями Совершенными организацией Тешкилат- и Махсуса (на основе документов Матенадарана)

(Резюме)

Саакян Вера

В архиве Матенадарана им. Месропа Маштоца среди ценных рукописей на армянском и иностранных языках, хранится большое количество документов, которые сообщают важные исторические подробности.

Для данной статьи из документов выбрали несколько: относящиеся к геноциду 1894-1918г., происходящего в разных районах Османской Турции.

Разбирая ход, виды организации резни, и участие в ней особо организованных полков и основываясь на общности их действий, мы сделали вывод что эти полки в широком смысле были связаны с отрядами под названьем “Тешкилат-и Махсуса. ”

Докладная записка о резне в Гюмюшхане включенная в статью, издается впервые.